ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 44-Լ

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետին:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ծառայողներին (աշխատողներին):

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«02»__10_____ 2023թ.

ք.Երևան

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
«02» 10 2023 թ.
Թիվ 44 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ լիազորություն ունեցող ստորաբաժանում) կողմից: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ գործընթացին ներգրավվում են ոստիկանության այլ ստորաբաժանումներ:

3. Լիազորություն ունեցող ստորաբաժանման կողմից հսկողությունն իրականացվում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց այցելություններ

կատարելու միջոցով և անհետաձգելի միջամտության ու պաշտպանական որոշումների պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկություններն արձանագրելու եղանակով:

2. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

4. Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառված անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ ցանկացած աղբյուրից տեղեկություններ ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային բաժնի լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողը (ծառայողները) մեկնում է բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր:

5. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է որոշման կայացման օրվանից հինգ օրվա ընթացքում՝ երկու անգամ ՝ լիազորություն ունեցող ստորաբաժանման հսկողություն իրականացնող ծառայողի կողմից բռնության ենթարկված անձի փաստացի գտնվելու վայր այցելությունների միջոցով և կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրվում է բռնության ենթարկված անձի կողմից: Վերջինիս ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ կատարվում է նշում:

6. Լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողների կողմից կազմվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն), որն իր մեջ ներառում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշմամբ նախատեսված սահմանափակումները, խախտման տեսակը, ընտանիքում բռնություն գործադրած, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (հերթական համար, երբ և ում կողմից է տրվել), ծննդյան թիվ, սեռ, տեղեկություններ

աշխատանքային գործունեության վերաբերյալ (զբաղեցրած պաշտոնը կամ կատարած աշխատանքը), կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, փաստացի գտնվելու վայրը), իրավիճակի նկարագրությունը, ամսաթիվը, բռնության ենթարկված անձի ստորագրությունը, լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը:

7. Խախտման մասին արձանագրությունը կազմելուց հետո լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անհապաղ գրավոր հայտնում է ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանմանը:

8. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների խախտման վերաբերյալ տեղեկությունները տարածքային ենթակայության կարգով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային բաժին: Եթե բռնության ենթարկվածը փոխում է բնակության վայրը հսկողությունն իրականացվում է տվյալ տարածքային բաժնի լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողի կողմից:

9.Կազմված փաստաթղթերը զեկուցագրով հանձնվում են որոշման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողին:

10. Հսկողություն իրականացնող լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողն արձանագրության պատճենը գրությամբ անհապաղ ուղարկում է աջակցության կենտրոն:

11. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն լիազորություն ունեցող ստորաբաժանման ծառայողի կողմից չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկված անձն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ժամկետի ընթացքում գտնվում է ապաստարանում: